Մէլիք Ատիլայ բանակեցաւ դէմ յանդիման նոցին, և յերկարիլ բանից իրաւախոհութեան, զկնի միոյ տարւոյ, նորոգեցին զդաշինս։ Մէլիք Ատիլ վերստին եթող Լատինաց զՅոպպէ, եւ եբարձ զմասնակցութիւնս այլազգեաց 'ի Լիւդիոյ և 'ի Ռեմղէէ. եւ ինքն չուեալ գնաց յԵգիպտոս (1197)։

Իսկ յամին 1218 վերստին ժողովեցան Լատինք բազմութեամբ 'ի Ծովեզերեայ քաղաքն Պաղեստայիս, և անտի դիմեալ բանակեցան 'ի Սամարիա. թէպէտ և եհաս անդ Մէլիք Ատիլ յԵգիպտոսէ, այլ ոչ կարաց 'ի դիմի հարկանիլ նոցա սակաւաթիւ զօրօք։ Լատինք ասպատակեցին զքաղաքս այլազգեաց եւ աւերեցին զբովանդակ դաւառն որ 'ի մէջ Պիսանայ և Նապլուսայ, և կոտորեալ զբազումս դարձան աւարաւ 'ի Պաղեստայիս։ Եւ 'ի յաջորդ ամին արշաւեցին 'ի սահմանս Եգիպտոսի և պաշարեցին զՏիմիաթ քաղաք. եհաս անդ Մէլիք Քեամիլ որդի Մէլիք Ատիլայ և բանակեցաւ ընդդէմ նոցա. և զկնի չորից ամսոց հալածական արար զնոսա անտի։ Իսկ Լատինք ասեն թէ՝ քրիստոնեայք առին զՏիմիաթ, այլ յետոյ զօրացեալ Արաբացւոց յաղթեցին նոցա, և զբազումս կոտորեցին 'ի բերան սրոյ։ Եւ յաւելուն թէ Ֆրանչիսկոս կրօնաւոր էառ իբր ժառանգութիւն զվանքն Սիօնի յԵրուսաղէմ 'ի բնակութիւն Լատին կրօնաւորաց, և հաստատեաց զկարգ Ֆրանչիսկեան կրօնաւորաց յԱսորիս (1219)։ Ի սմին ամի մեռաւ Մէլիք Ատիլ, և եկաց իշխան յԵգիպտոս որդի նորին Մէլիք Քեամիլ, և եղբայր սորա Մէլիք էլ Մուազզամ Իսայ 'ի Դամասկոս։ Իսկ Լատինք վերստին դիմեցին 'ի կողմանս Եգիպտոսի, և առին զՏիմիաթ քաղաք, և 'ի սուր մաշեցին զբնակիչս նորին, եւ զմզկիթն փոխեցին յեկեղեցի. (1220)։ Իբրեւ լուաւ զայս Մէլիք էլ Մուազզամ՝ տէրն Դամասկոսի, երկեաւ յոյժ. զի 'ի յարձակիլ Լատինաց 'ի վերայ Երուսաղէմի, չէր ձեռնհաս խափանել զարշաւանս նոցա և պահել զքաղաքն. ուստի առաքեաց զբազմութիւն գործաւորաց և քարահատաց, և ետ հիմնայատակ կործանել զպարիսպ քաղաքին, զոր Մէլիք Սալահատտին կարի վայելուչ շինեալ և ամրացուցեալ էր զայն, որպէս ասացաք 'ի նախընթաց գլուխն։ Զայն տեսեալ բնակչաց քա-